



## Ա. ՏԱՅԱՆ

### Ս. ՆԵՐՍԵՍ ԾՆՈՐՀԱԼՈՒ ԵՐԿԵՐԸ ՕՏԱՐ ՂԵԶՈՒՆԵՐՈՎ

Ըստ մատենագիտական առյուրների\*, միջնադարյան հայ մեծ բանաստեղծ և մատենագիր Ներսես Շնորհալու երկերի թարգմանություններն ունեն շորշ 150 տարվա պատմություն։

Ներսես Շնորհալու երկերի թարգմանությունները օտար լեզուներով սկսվել են 19-րդ դարի առաջին երեսնամյակում։

Առաջին անգամ 1825-ին Վենետիկում Մխիթարյան միաբանների համաձեռնությամբ լույս է տեսնում Ներսես Շնորհալու դպրանարանական ճառերից և բազմաթիվ համակենտրոնական ժամանակակից բաղկացած մի հատոր ֆրանսերեն թարգմանությամբ (Nersès IV Glajetzi. Discours synodal, suivis d'un grand nombre de ses lettres. Venise, St. Lazare, 1825. 332 p.):

Ապա 1829-ին Վենետիկում լույս է տեսնում Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանուրական»-ը՝ լատիներեն թարգմանությամբ. թարգմանիչն էր իտալացի հայացեն Ջովեպակ Կապելլետին (Nersès IV Glajetzi. Correspondances dogmatiques. Trad. de l'arménien en latin par J. Cappelletti. Venise. St. Lazare, 1833, 2 vol.):

\* Այդ առյուրներից հատկապես կարևոր է Անտևյալ աշխատությունը, որից բաղկան ենք մեր հիմնական տեղեկությունները. Արմենակ Սարմաղյան, Հայկական մատենագիտություն—Bibliographie de l'Arménie — ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1969. Մեզ համար մյուս տեղեկատու առյուրները եղան՝ Հայկ Դավթյան, «Հայ գիրք 1801—1850 թվականներին», Երևան, 1967. Սուրեն Շոիկյան, «Հայ գրականության ժամանակագրություն» (1801—1850), ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1973. Հ. Արսեն Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն և համբախորան հայ կյանքի», Վենետիկ, 1909.

Շնորհալու օտար հրատարակությունները փակագծերի մեջ կամ այլապես ներկայացրել ենք իրենց վերագրերով, ըստ Ա. Սալմասյանի մատենագիտության։

Epistola pastoralis, quam ex Armenio latinitate primum donatum... publici Juris facit J. Cappelletti. Venetiis, S. Lazarus, 1829):

Ապա 1830-ին Վենետիկում առվար հատորով լույս է տեսնում Ներսես Շնորհալու հոգևոր և պատմական բովանդակությամբ բանաստեղծությունները ֆրանսերեն թարգմանությամբ (Nersès IV Glajetzi. Poésies sacrées et historiques. Venise, St. Lazare, 1830. 620 p.):

Երեք տարի անց, 1833-ին, Վենետիկում երկու հատորով լույս է տեսնում Ներսես Շնորհալու դպրանարանական համակենտրոնական ժամանակակից բաղկացած մի զրոյնյիկ գերմաներեն թարգմանությամբ. թարգմանիչն էր միջազգ իտալացի հայացեն Ջովեպակ Կապելլետին (Nersès IV Glajetzi. Correspondances dogmatiques. Trad. de l'arménien en latin par J. Cappelletti. Venise. St. Lazare, 1833, 2 vol.):

Այսուհետև Վիեննայի Մխիթարյաններու 1861-ին լույս են ընծայում Ներսես Շնորհալու հոգևոր երգերից բաղկացած մի զրոյնյիկ գերմաներեն թարգմանությամբ (Nersès IV Glajetzi. Gebete von Patriarchen der Armenier S. Nerses Glajense verfasst. Wien, Mechitaristen, 1861. 23 p.):

Հետաքրքրական է Ներսես Շնորհալու «Հավատով խոստովանիմ»-ի բազմակազմական հրատարակությունները Վենետիկի Մխիթարյանների ջանքերով։

Մխիթարյան միաբանները «Հավատով խոստովանիմ»-ը, 24 տեսերից բաղկացած այդ գեղեցիկ աղոթք-բանաստեղծությունը, առաջին անգամ 1810-ին լույս են ընծայում 6 լեզուներով, ապա 1812-ին հրատարակում են 10 լեզուներով, 1815-ին՝ 14 լեզուներով, 1818-ին՝ 16 լեզուներով, 1823 և 1827 թվականներին՝ 24 լեզուներով (Վերջին երկու

հրատարակություններից յորաքանչյուրը կազմում է շուրջ 430 էջ), և վերջապես 1882-ին հրատարակում են 36 լեզուներով: Վերջին հրատարակությունը, որ կազմում էր 600 էջանոց մի հասոր, կրնմ էր լատիներեն հետևյալ ընդհանոր տիտղոսաթերթ՝ Nenses IV Glajetzi. Preces Sancti N. Clajensis Armeniorum Patriarchae, triginta sex Linguis editae. Venetiis, S. Lazari, 1882:

Վարագակավոր միաբանների այս գեղեցիկ ձեռնարկը, որի շարքիվ այդքան լայն հորիզոններ էր բացվում Ներսես Շնորհալու այդ ոգեշունչ և զմայլելի ստեղծագործության առաջ, բացադիր երևություն է հայ գրականության պատմության մեջ:

Նոյն «Հավատով խոստվանեմ»-ը բազմազվյան մի հրատարակություն է ունենում նաև Սուվորով, որ 1830-ին Լազարյան ճեմարանի տպարանից լույս է տեսնում 12 լեզուներով, հայերեն և ուստի հետևյալ վերագրով. «Հոչակար աղօթք տեսոն Ներսեսի սրբազն կաթողիկոսի հայոց, տպագրեալ երկուտասան լեզուոք: Մոլիտվա սբ. Պատրիարքա Ներսեսա. Խճանայ առ 12 յայկա»:

Ֆրանսիացի հայագետն Էդուարդ Դյուլուրիեն 1869-ին Փարիզում հրատարակած հայագիտական ուսումնասիրությունների մի հատորում թարգմանարար գետեղել էր Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» պոեմից ընդարձակ հատվածներ (Ed. Dulauret. Documents arméniens. Paris, 1869, pp. 226—268):

Այնուհետև բեղջինցի հայագետն Ֆելիքս Նըր 1886-ին Լուվենում լույս է ընծայում „L'Arménie chrétienne et sa littérature“ («Քրիստոնյա Հայատանը և իր գրականությունը») խորագրով ֆրանսերեն մի աշխատություն, որ հետինակը թարգմանարար գետեղել էր Շնորհալու շարականներից մի հատընաժիր: Նոյն 1886 թվականին Ֆելիքս Նըր Լուվենում հրատարակում է Ներսես Շնորհալուն նվիրված ֆրանսերեն մի ուսումնասիրություն հետևյալ վերնագրով. „Le Patriarche Nersès IV, dit Schnorhal, en visagé comme écritain“ («Հայրապետ Ներսես Շնորհալին որպես գրող»):

Արշակ Զոպանյանը իր „La roseraie d'Arménie“ («Բուրաստան Հայատանի») երկրորդ հատորում, որ լույս տեսավ Փարիզում 1923-ին, թարգմանարար գետեղել էր Շնորհալու 11 համելուկներ:

Ապա Բուտոնում 1941-ին լույս է տեսնում Շնորհալու դավանարանական երկերից բաղկացած անգլերեն մի գրքովկ Դերենիկ Վոր. Փոլադյանի թարգմանությամբ, ներածականով և բացատրականով (Nerses

IV Glajetzi. The Profession of Faith of the Armenian Church. Transl. with Introduction and Comment by T. Vart. Poladian. Boston, 1941):

Այնուհետև Նյու-Յորքում 1947-ին լույս է տեսնում Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» արևմտական անգլերեն թարգմանությամբ: Թարգմանիչն էր հայագետն, ամերիկանի Զեն Վինագառ (Nerses IV Glajetzi. Jesus Son, Only-Begotten of the Father. Rendered into English by J. S. Wingate, New York, 1947):

Վերջապես Ներսես Շնորհալու 800-ամյակի առիթով Վենետիկի և Ղազարի տրապարանից 1973 թ. վերշերին լույս է տեսնում միջնադարյան հայ մեծ բանաստեղծի հոգևոր երգերը պարունակող մի հասոր՝ հայութեան թարգմանությամբ:

Շուրջ 250 էջ և 6000 տող կազմող ներկա հասորը շքեղատիպ մի հրատարակություն է, որով Ներսես Շնորհալու հոգևոր երգերը առաջին անգամ օտար ընթերցողին են ներկայացվում այդքան ծավալուն չափերով:

Հասորը կազմել, թարգմանել և ներածական հոդվածը ստորագրել է Միջնադարյան բազմավաստուկ բանասեր, բանաստեղծ և գրականագետն հ. Մեսրոպ Շանաշյանը, իսկ հասորի առաջարանը ստորագրել է իտալացի հայագետ Ուգո Ֆազոլոն:

Հ. Մեսրոպ Շանաշյանն իր ներածության մեջ նշել է. «Մեր ընտրությունը եղել է շատ խիստ, մենք սահմանահակվել ենք այն շարականներով, որոնք ավելի վատահելի են և վավերական են ճանաչված բանավոր կամ գրավոր ավանդության տվյալներով, շիհաշված այն շարականները, որոնք տարբեր ճանապարհով (ակրոստիքոսի կազմությամբ) ինքնին ստուգ են և առիթ չեն տալիս որևէ տարակույսի»:

Թարգմանությունը կատարված է նորախնդիր ճաշակով, հայերեն բնագրի ոգունու ու արվեստին քաջանուն և հատկերեն լեզվի ճրություններին խորագիտակ մարդու ձեռնահասությամբ. հատկերեն թարգմանության մեջ հաջողապես պահպանված է Շնորհալու շարականների պարզությունն ու գեղեցկությունը. կարելի է ասել, որ իտալերեն թարգմանությունը հարազատ հայելացուն է հայերեն բնագրի, ի բաց առյալ բնագրի հանգերը, որոնք դիտմամբ զանց է առել թարգմանիչը, ավագույն և ամեաթար կերպով փոխանցելու համար իտալացի ընթերցողին Շնորհալու շարականների ներին հմայքը:

Այսպիսով իտալացի ընթերցողն առաջին անգամ հ. Մեսրոպ Շանաշյանի գեղեցիկ թարգմանությամբ հնարավորություն է

ստանում հաղորդվելու միջնադարյան մեր երկու մեծագույն բանաստեղծերից մեկի՝ Շնորհալու առեղծագործության կարևոր մի մասին, ինչպես որ ֆրանսիացի ընթերցողը 1961 թվին առաջին անգամ հ. Սահմակ Քեշշյանի թարգմանությամբ հնարավորություն ունեցավ ծանոթանալու միջնադարյան մեր երկու մեծագույն բանաստեղծերից մյուսի՝ Նարեկացու «Մատեան ողբերգութեան»-ը իր ամբողջության մեջ:

Այստեղ խորք տանք իտալացի հայագետին, որի առաջարար այնքան գեղեցիկ և այնքան տպավորիչ է, որ մենք թարգմանարար քերում ենք ամբողջապես:

Ոգու Ֆազոլոն գրել է.

«Այսօրվա կեղծ միջուներին անվերապահ հարումը մեզ հեռացնում է մեր էռության խոր արմատներից և մեզ տանում է դեպի անորոշ ապագայի անգույն միջածը: Անցյալ ժամանակների հորդանքի վանումը կառաջացներ նաև վանումն այն ամենին, ինչ լուսավորել է մարդու հոգին, հետևարար և կառաջացներ կորուստը մի հարջության, որը կարուր ազդակ է առաջադիմության համար: Մարդ եղանակի և մոլորված կիմեներ առանց պատմության և ավանդության, առանց այն սնունդի, որ հայրերը նախապատրաստել են ի պեսու որդիների:

Հոգենեան կյանքում փորձառության թելադրած խորքերի կոտակումը հիմնական մաս են կազմում այն պարզելի, որ անցյալը ընծայում է ներկայի մարդուն իր գոյության և վաղվա գոյատևման համար, և դա այն պատուին է, որ ժամանակի տևողությունից ոչ խամրում է, ոչ չորանում, ոչ փստում:

Բանաստեղծությունը նոյնական կապված չէ մատերիալի էնտրոպիկ անկման օրենքի հետ. նա ապրում է ոգու շրջանակում, որի կյանքը դորս է տվյալ դարաշրջանից, տրվյալ ժամանակից: Այդ պատճառով է, որ անցյալ դարերի բանաստեղծության խորքերն ապրում են և կարող են մեզ վերահայտնել իրենց սկզբանական գունավառությամբ. Երանք իրենց մեջ կրում են ցուցումն անացնական Հավերժի:

Այս էջերում առաջին անգամ իտալերեն լեզվով մեզ ներկայացվում է ներսւան Կլանցի Շնորհալու քնարական առեղծագործությունը: Ավելի քան ութ դար է անցել այն օրից, երբ մերձակա ազգերի հայածանելերից տանչված հարազատ Հարատանում ներսւան Շնորհալին ապրել և գործել է՝ պաշտպանելու համար քրիստոնեական հավատը և իր հայրենիքը: Մեծապես կարևոր եղավ նրա դավանարանական ու կրոնական գործունեությունը, բայց նոյնական կարևոր եղավ նաև նրա գրական գործունեությունը, քանի որ նրան են պարտա-

կան հայերենի տաղաչափական և ոճական նորամուծությունները: Նրա տաղաչափության ցայտուն հատկանիշները մի որիշ լեզվի փոխադրելու դժվարությունը մեծ մասմբ կախված եր նրա պոեզիայի ոչ բավարար ճանաչողությունից: Հ. Մեսրոպ Շամաշյանը մոտեցել է դժվարին խնդրին, ու զինված իր մայրենի հայ լեզվի հմտությամբ և իտալերեն լեզվի տիրացումով, որ նա ձեռք է բերել Վենետիկում իր երկարամյա քնարությամբ, կարողացել է գլուխ բերել գործը:

Փոքրիկ պոեմներ, օրիներգեր, տաղեր՝ ահա սրանք են բանաստեղծական այն երկերը, որոնք կազմում են մեզ ներկայացված ներկա հատորյակը: Զանց առնելով բանաստեղծի մեծ պոեմները, թարգմանիչը ընտրել և մի որիշ ազգի լեզվով ներկայացրել է այն գործերը, որոնք իրենց անմիջական ապրումով ավելի լավ են զգացնում հեղինակի քնարական շունչը: Հոգևոր երգերի այս հավաքածողի մեջ ներկա է ասուվածարանն ու գեղագետը և սակայն բանաստեղծի ձիրքը այնպիսին է, որ ոչ թե սահմանափակել, այլ որոշ հմատով ավելի է զորացրել արտահայտչական կերպավորումը: Քնարական զեղումը ազատ է, մըրտակա, առանց թուլացումների: Սուրբ Գրքի տվյալները, որոնք առկա են քերթվածներում, ասավածարանական փաստերը, որոնք հավաստվում են նրանց մեջ, ստանում են քնարական պատկերների ձև, հովագի և ոգու լուսարձակումներ: Բանաստեղծական անսպառ գյուտերի թարմությունը, որ տող առ տող ծավալվում է մեծ մասմբ ուղ վանկանի տողերի վրա հիմնված ճարտարակություն մեջ, միան բանաստեղծ Շամաշյանի գրչով կարող լր հաշողապես փոխադրվել մի որիշ լեզվի: Փառանության, օրինության, միջերերենի, եղանքի ու ներքողների շարականները հաշորդում են մեկը մյուսին և մեզ բարձրացնում լուսելեն մի միջավայրում, որ ապրում են մերեշտակները, որ հավատը լուսավոր մի ներդաշնակություն է, որի մեջ «...դաշտերը սևուցված են արդարությամբ, անապատները գեղեցկացված են կուսական մաքրությամբ»: Այս էջերը ողովակած են բանաստեղծի, բանաստեղծի ու սրբակացի ու գեղեան սիրո խանուով. նրա խորքերը դեռ այսօր էլ կարող են հոգեկան սնունդ լինել և բերկրանք պատճառել: Ոգու լույսը, որ իր մեջ է միաձուում միտքը և հավատը, կենապարար լույս է և չի հանգի ժամանակի տևողությունից. այս էջերը մի անգամ ևս այդ են ապացուցում»:

Այստեղ հարկ է ավելացնել, որ հ. Մեսրոպ Շամաշյանի շանքերի արդյունքն է ոչ

միայն ներսես Ծնորհալու ներկա խտալերեն թարգմանությունը, այլև ավելի վաղ սիյուռքահայ և հայրենի պոեզիայի ընտիր հմուշների խտալերեն թարգմանությունները, որոնց միջոցով խտալացի ընթերցողը հաղորդակից դարձավ հայ նորագույն պոեզիայի լավագույն արժեքներից:

Ծնորհալու խտալերեն ներկա հատորիակը զարդարված է միջնադարյան կիլիկյան շրջանի հայ մեծագույն մանրանկարիչ Թորոս Ռովիցի Երևանյան չորս մանրանկարների արտատպությամբ, իսկ հատորի կազմ՝ ներսես Ծնորհալու գունատիպ պատկերով:

